# Տարեկան Զեկույց

# 2024

Հայ ժողովրդի կողքին
1992թ.-ից ի վեր

Peace Corps
ARMENIA

## Խաղաղության Կորպուսի մասին

Խաղաղության կորպուսը ԱՄՆ կառավարությանն առընթեր կազմակերպություն է, որը 1961 թվականին հիմնադրվել է ԱՄՆ նախագահ Ջոն Ֆ. Քենեդիի կողմից՝ աշխարհում խաղաղություն և բարեկամություն խթանելու նպատակով:

Խաղաղության կորպուսը հնարավորություն է տալիս հմուտ և նվիրված ամերիկացի կամավորների ծառայելու աշխարհի ավելի քան 60 երկրում:

## Խաղաղության Կորպուսը Հայաստանում

Խաղաղության կորպուսը գործում է Հայաստանում 1992 թվականից ի վեր՝ Հայաստանի կառավարության հրավերով: Մինչ օրս, ավելի քան 1100 ամերիկացի կամավոր է ծառայել հայ ժողովրդի կողքին:

## Մեր Կամավորները

- ԱՄՆ քաղաքացիներ են,
- Հայաստան են գալիս երկու տարի ժամկետով,
- 20-ից 75 տարեկան են,
- Բնակվում են Հայաստանի տարբեր մարզերի գյուղերում և քաղաքներում,
- Ապրում են համայնքներում, հյուրընկալող ընտանիքներում,
- Սովորում են հայոց լեզուն և ծանոթանում հայ մշակույթին,
- Ստանում են Հայաստանի միջին աշխատավարձին համարժեք թոշակ՝ կեցության ծախսերը հոգալու համար:

# 2024 թվականին՝

Հայաստանի տարբեր համայնքներում ապրել և ծառայել է **38** կամավոր Խաղաղության կորպուսի

Կամավորներին հյուրընկալել է **27** դպրոց

**9** երիտասարդական կազմակերպություն

**42** ընտանիք

Կամավորներն աշխատել են ավելի քան **55** անգլերեն լեզվի ուսուցչի հետ

**46** երիտասարդական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ

**580** երիտասարդի հետ

**5000** աշակերտի հետ

Ավելի քան **1200** երիտասարդ մասնակցել է կամավորների վարած անգլերեն լեզվի խմբակներին / ճամբարներին

Հայաստանի տարբեր մարզերից **50** երիտասարդ մասնակցել է «Երիտասարդների առաջնորդության և քաղաքացիական կրթության» ճամբարին

Հայաստանի **8** համայնք օգտվել է կամավորների կողմից իրականացված դրամաշնորհային ծրագրերից՝ ավելի քան **40 000 ԱՄՆ դոլար** արժողությամբ:

Peace Corps ARMENIA

## Մեր Ծրագրերը

2024 թվականին Խաղաղության կորպուսը Հայաստանում իրականացրել է երկու հիմնական ծրագիր՝ Անգլերեն լեզվի դասավանդում և Երիտասարդության զարգացում:

### Անգլերենի Դասավանդումը Որպես Օտար Լեզու (TEFL)

Անգլերեն լեզվի դասավանդման շրջանակներում մեր կամավորները դասավանդում են տեղի հայկական դպրոցներում՝ անգլերեն լեզվի հայ ուսուցիչների հետ միասին: Այս գործընկերության շնորհիվ՝

- Գործընկեր ուսուցիչները բարելավում են անգլերեն լեզվի իրենց հմտությունները և ձեռք են բերում վստահություն՝ դասավանդման նոր, ինտերակտիվ և հաղորդակցական մեթոդների կիրառման համար,
- Աշակերտները, բարելավելով իրենց անգլերեն լեզվի հմտությունները, անձնական և մասնագիտական աճի հնարավորություն են ունենում:

### Երիտասարդության Զարգացում

Երիտասարդության զարգացման ծրագրի շրջանակներում մեր կամավորներն աշխատում են համայնքային քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և երիտասարդական կենտրոնների հետ:

Այս գործընկերության շնորհիվ՝

- Երիտասարդները ձեռք են բերում կյանքի և զբաղունակության հմտություններ՝ մասնակցելով Խաղաղության կորպուսի կամավորների և նրանց հայ գործընկերների կողմից իրականացվող ակումբներին, ճամբարներին, արտադպրոցական և մենթորական ծրագրերին:
- Երիտասարդները ձեռք են բերում համայնքային նախագծեր կազմակերպելու հմտություններ՝ դառնալով համայնքում ավելի ներգրավված անհատներ:

### Ազգային Գործընկեր

Հայաստանում Խաղաղության կորպուսի հիմնական գործընկերն է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: